ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-897-12.03.2021,27.04.2021-ՖՎ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի մայիսի 26-ի ՀՕ-80-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-րդ և 9.1-րդ կետերով.

«2.1) **նախորդող հանցագործությունը** հանցագործություն է, որի կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի ստացվել կամ առաջացել է գույքը.

«9.1) **դրամական փոխանցումը** գործարք է, որը ֆինանսական հաստատության միջոցով կատարվում է փոխանցումը կատարողի անունից՝ նպատակ ունենալով այդ կամ այլ ֆինանսական հաստատությունում որոշակի գումար հասանելի դարձնել փոխանցումը ստացողի համար՝ անկախ փոխանցումը կատարողի և փոխանցումը ստացողի նույն անձը լինելու հանգամանքից.»:

2) 1-ին մասի 3.1-րդ կետում «տրամադրումն է» բառերը փոխարինել «տրամադրումը կամ հավաքումն է» բառերով:

3) 1-ին մասի 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14) **իրական շահառուն** ֆիզիկական անձ է, որի անունից կամ օգտին հաճախորդն իրականում գործում է, և (կամ) որն իրականում (փաստացի) վերահսկում է հաճախորդին կամ այն անձին, որի անունից կամ օգտին գործարքը կատարվում է կամ գործարար հարաբերությունը հաստատվում է: Իրավաբանական անձի (բացառությամբ տրաստի կամ օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այլ իրավաբանական կազմավորման) իրական շահառու է համարվում այն ֆիզիկական անձը, որը՝

ա. ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) քսան և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի քսան և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում,

բ. տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով,

գ. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումը իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, եթե առկա չէ սույն կետի «ա» և «բ» ենթակետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ:».

4) 1-ին մասի 16-րդ կետը «ինչպես նաև» բառերից հետո լրացնել «տրաստը կամ» բառով:

5) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 16.1-րդ կետով.

«16.1) **տրաստը** օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այլ իրավաբանական կազմավորում է, որում տրաստի կառավարիչը ֆիդուցիար պարտավորությունների հիման վրա կատարում է տրաստի հիմնադրի կողմից սեփականության իրավունքով իրեն փոխանցված գույքի հետ կապված գործարքներ՝ ի շահ տրաստի շահառուի:»:

6) 1-ին մասի 21-րդ կետում հանել «, նրա ընտանիքի անդամ կամ նրա հետ այլ կերպ փոխկապակցված անձ (հայր, մայր, ամուսին, տատ, պապ, քույր, եղբայր, երեխաներ, ամուսնու ծնողներ)» բառերը, «շահառուները,» բառից հետո լրացնել «կյանքի ապահովագրության վկայագրերի շահառուները,» բառերով:
7) 1-ին մասի 22-րդ կետի «բ» ենթակետում «հաճախորդի» բառից հետո լրացնել «,ինչպես նաև քաղաքական ազդեցություն ունեցող անձ հանդիսացող իրական շահառուի» բառերով,
8) 1-ին մասի 25-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«25) **քաղաքական ազդեցություն ունեցող անձը** պետական, քաղաքական կամ հանրային բնույթի, ինչպես նաև միջազգային կազմակերպությունում նշանակալից գործառույթներ իրականացրած կամ իրականացնող անձն է (այդ թվում՝ նրա ընտանիքի անդամը կամ նրա հետ սերտորեն փոխկապակցված անձը): Ընդ որում, քաղաքական ազդեցություն ունեցող անձանց շրջանակը չի ընդգրկում միջին և ցածր դասի գործառույթներ իրականացնող անձանց: Քաղաքական ազդեցություն ունեցող անձինք են մասնավորապես՝
ա. պետության ղեկավարները, կառավարության ղեկավարները, նախարարները և նախարարի տեղակալները,
բ. խորհրդարանի անդամները,
գ. բարձրագույն ատյանի դատարանի, սահմանադրական դատարանի կամ այլ բարձր դատական ատյանների դատավորները, անդամները, որոնց որոշումները բողոքարկման ենթակա չեն, բացառությամբ առանձնահատուկ հանգամանքներով պայմանավորված բողոքարկման դեպքերի,
դ. կենտրոնական բանկի նախագահը, նրա տեղակալները և խորհրդի անդամները,
ե. դեսպանները, գործերի հավատարմատարները և զինված ուժերի բարձրաստիճան սպաները,
զ. քաղաքական կուսակցության պաշտոնատար անձինք,
է. պետական սեփականություն հանդիսացող կազմակերպության վարչական, կառավարման կամ վերահսկողական մարմինների անդամները,
ը. տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարները,
թ. միջազգային կազմակերպության ղեկավարները, ղեկավարի տեղակալները, խորհրդի անդամները կամ կառավարչական կամ վերահսկողական այլ համանման գործառույթներ իրականացնող մարմինների անդամները.»:
9) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 25.1-րդ և 25.2-րդ կետերով.
«25.1) **միջազգային կազմակերպությունը** անդամ երկրների միջև միջազգային պայմանագրի կարգավիճակ ունեցող պաշտոնական քաղաքական համաձայնության հիման վրա ստեղծված կազմակերպություն է, որն իր գտնվելու վայրի երկրում ռեզիդենտ կառուցվածքային միավոր չի համարվում:
25.2) **ընտանիքի անդամը** «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված անձն է:

Հոդված 2. Օրենքի 2-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
«ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԶԵՆՔԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ»

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերում «ֆինանսավորման» բառից հետո լրացնել «, ինչպես նաև զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման» բառերով:

Հոդված 4. Օրենքի 6-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը «գումարը» բառերից հետո լրացնել «հավասար է կամ» բառերով:
2) 4-րդ մասի 3-րդ կետում բ. ենթակետի «տնօրեն (գործադիր մարմին)» բառերը փոխարինել «գործունեության ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ (մարմնի անդամ)» բառերով:
3) 4-րդ մասի 5-րդ կետում «դրամը» բառը փոխարինել «դրամին հավասար կամ դրան» բառերով:
4) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
«5. Հաշվետվություն տրամադրող անձին, նրա աշխատակիցներին (ղեկավարներին) արգելվում է այն անձին, որի վերաբերյալ հաշվետվություն կամ այլ տեղեկություններ են տրամադրվում լիազոր մարմնին, ինչպես նաև այլ անձանց, բացառությամբ ֆինանսական խմբի դեպքում՝ ֆինանսական խմբի անդամին, հայտնել հաշվետվության կամ այլ տեղեկությունների տրամադրման կամ չտրամադրման, այդ թվում՝ սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն հանձնարարականների ստացման կամ չստացման փաստի մասին:»:

Հոդված 5. Օրենքի 10-րդ հոդվածում՝
1) 1-ին մասի 6-րդ կետում «գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը» բառերը փոխարինել «գործարքի կատարումը կամ գործարար հարաբերության հաստատումը» բառերով:
2) 1-ին մասի 18-րդ կետի «տվյալների հիման վրա» բառերից հետո լրացնել «կամ սեփական նախաձեռնությամբ» բառերով:
3) 4-րդ մասում «10-րդ և 11-րդ կետերով սահմանված իրավասությունները» բառերը փոխարինել «10-րդ կետով սահմանված իրավասությունը, ինչպես նաև 11-րդ կետով սահմանված՝ ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց գույքը սառեցնելու իրավասությունը՝» բառերով:

Հոդված 6. Օրենքի 11-րդ հոդվածում.
ա) 1-ին մասի 13-րդ կետում «՝ ոչ ֆինանսական հաստատության կամ անձի» բառերը փոխարինել «գործառույթները հաշվետվություն տրամադրող անձի» բառերով,
բ) 1-ին մասի 18-րդ կետում «այլ դրույթներ» բառերը փոխարինել «պարտականությունների կատարմանը ներկայացվող նվազագույն պահանջները» բառերով:

Հոդված 7. Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասում «և կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ սահմանված կարգով» բառերը փոխարինել «, որոնք կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ սահմանված կարգով և չեն կարող տրամադրվել երրորդ անձի՝ բացառությամբ քրեական հետապնդման մարմինների» բառերով:

Հոդված 8. Օրենքի 13-րդ հոդվածում՝
1) 3-րդ մասի 1-ին պարբերությունը «կասկածներ» բառից հետո լրացնել «, կամ նախորդող հանցագործության այնպիսի հիմնավոր կասկածներ, որոնք կարող են հանգեցնել փողերի լվացման:» բառերով:
2) 4-րդ մասի 1-ին պարբերությունը «վերաբերյալ» բառից հետո լրացնել «, կամ նախորդող հանցագործության կասկածի կամ դեպքի վերաբերյալ, որը լիազոր մարմնի կարծիքով կարող է հանգեցնել փողերի լվացման:» բառերով:

Հոդված 9. Օրենքի 16-րդ հոդվածում՝
1) 1-ին մասի 2-րդ պարբերությունում հանել «կամ միանգամյա գործարք կատարելու» բառերը**:**

2) 3-րդ մասում «դրամը» բառը փոխարինել «դրամին հավասար կամ դրան» բառերով , իսկ «(բացառությամբ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածների առկայության, որի դեպքում հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունն իրականացվում է անկախ գումարային սահմանաչափից),» բառերից հետո լրացնել «ինչպես նաև սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված դեպքերում,» բառերով:
3) 4-րդ մասի 2-րդ կետում.
ա) «վայրը,» բառից հետո լրացնել «գործունեության իրականացման վայրը (եթե տարբերվում է իրավաբանական անձի գտնվելու վայրից), կանոնադրությունը կամ համանման այլ փաստաթուղթը,» բառերով,
բ) «գործադիր մարմնի ղեկավարի» բառերը փոխարինել «գործունեության ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձի (մարմնի անդամի)» բառերով:
4) 5-րդ մասի 1-ին կետում հանել «պարզի լիազորված անձի առկայությունը և առկայության դեպքում» բառերը, իսկ «լիազորված անձին» բառերից հետո լրացնել «(առկայության դեպքում)» բառերը:
5) 5-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«2) նույնականացնի իրական շահառուին և ողջամիտ քայլեր ձեռնարկի նրա ինքնությունը ստուգելու նպատակով՝ արժանահավատ աղբյուրներից ստացված տեղեկությունների հիման վրա, ընդ որում Հայաստանի Հանրապետության և (կամ) օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպության կամ հիմնարկի դեպքում՝ սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի «ա»-«գ» ենթակետերով սահմանված կարգով:»:
6) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-րդ մասը.
5.1 Սույն հոդվածի 5-րդ մասի 2-րդ ենթակետի համաձայն հաճախորդի իրական շահառուին նույնականացնելու և ինքնությունը ստուգելու նպատակով հաշվետվություն տրամադրող անձի կողմից ձեռնարկված քայլերը, եզրահանգումները և դրանց հիմնավորումները փաստաթղթավորվում ու պահպանվում են սույն օրենքով սահմանված կարգով և ժամկետում:»:
7) 6-րդ մասում հանել «հաճախորդի իրական շահառուին պարզելու նպատակով» և «(բացառությամբ արժեթղթերի շուկայի կարգավորման օրենսդրությամբ նախատեսված հաշվետու թողարկողների)» բառերը:
8) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-րդ մասը.
«6.1 Տրաստ կամ օտարերկյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այլ իրավաբանական կազմավորում հանդիսացող հաճախորդների դեպքում հաշվետվություն տրամադրող անձը հաճախորդի իրական շահառուին նույնականացնելու և ողջամիտ քայլերի ձեռնարկմամբ նրա ինքնությունը ստուգելու նպատակով պետք է լիարժեք տեղեկություններ ունենա դրա հիմնադիրների, կառավարիչների, շահառուների (այդ թվում՝ շահառուների դասի), շահերի պաշտպանի (առկայության դեպքում) և իրական (փաստացի) հսկողություն իրականացնող այլ ֆիզիկական անձի կամ համանման գործառույթներ իրականացնող անձի և նրանց լիազորությունների վերաբերյալ:»:
9) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«Հաշվետվություն տրամադրող անձը պետք է հասկանա հաճախորդի գործարար բնութագիրը, գործարքի կամ գործարար հարաբերության նպատակը և նախատեսվող բնույթը, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, ձեռք բերի տեղեկություններ գործարքի կամ գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի մասին:»:
10) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-րդ մաս.
«7.1 Տրաստի կառավարիչ հանդիսացող հաճախորդը (այդ թվում՝ ոչ ֆինանսական հաստատությունը) սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կամ 2-րդ կետով սահմանված դեպքերում հաշվետվություն տրամադրող անձի հետ գործարք կատարելիս կամ գործարար հարաբերություն հաստատելիս պարտավոր է բացահայտել իր կարգավիճակը:»:

Հոդված 10. Օրենքի 18-րդ հոդվածում.
1) 4-րդ մասում «օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող անձ» բառերը փոխարինել «տրաստ կամ օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այլ իրավաբանական կազմավորում» բառերով,
2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-րդ մաս.
«4.1. Հաշվետվություն տրամադրող անձը պարտավոր է նույնականացնել կյանքի ապահովագրության կամ ներդրումային բնույթի այլ ապահովագրական վկայագրի պայմանագրի շահառուին վերջինիս ինքնությունը կամ բնորոշ հատկանիշները պարզելուց անմիջապես հետո, իսկ ինքնության ստուգումն իրականացնել ապահովագրական հատուցումը վճարելու պահին: Ընդ որում.
ա) ֆիզիկական կամ իրավաբանական անձ շահառուների համար՝ առնվազն ձեռք բերելով տվյալ անձի անունը, ազգանունը կամ անվանումը,
բ) որոշակի հատկանիշների կամ որոշակի խմբին դասվելու կամ որևէ այլ հիմքով շահառուների համար՝ առնվազն ձեռք բերելով ապահովագրական հատուցումը վճարելու պահին շահառուներին նույնականացնելու համար բավարար տեղեկություններ:»

Հոդված 11. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասում
1) 4-րդ կետում «փաստաթղթավորի» բառից առաջ լրացնել «հասկանա, ինչպես նաև» բառերով.2) 5-րդ կետում «տարանցիկ հաշիվների դեպքում» բառերը հանել, իսկ «ա» ենթակետում «իրականացրել է» բառից առաջ լրացնել «տարանցիկ հաշիվների դեպքում» բառերով:

Հոդված 12. Օրենքի 20-րդ հոդվածում
1) 1-ին մասի 3-րդ կետում «տվյալները» բառից հետո լրացնել «, կամ փոխանցումը կատարողի հասցեն, կամ ծննդյան ամսաթիվը և վայրը՝», իսկ «(պետական գրանցման, հաշվառման համարը և այլն)» բառերից հետո՝ «կամ գտնվելու վայրի հասցեն՝» բառերով:
2) 2-րդ մասից հանել «Բոլոր» բառը:

Հոդված 13. Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը «պետք է» բառից հետո լրացնել «ձեռնարկի համարժեք միջոցառումներ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերը զսպելու ուղղությամբ, ինչպես նաև» բառերով:

Հոդված 14. Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասում.
1) 11-րդ կետը «հաճախորդը» բառից հետո լրացնել «կամ իրական շահառուն» բառերով,
2) 15-րդ կետը «տեղեկատվության» բառից հետո լրացնել «, այդ թվում՝ կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ տեղեկությունների» բառերով:

Հոդված 15. Օրենքի 26-րդ հոդվածում՝
1) 2-րդ մասում «5 օրով կասեցնելու» բառերը փոխարինել «15 օրով կասեցնել» բառերով,
2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
«Այն դեպքում, երբ լիազոր մարմինը սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով կասեցված գործարքի կամ գործարար հարաբերության առնչությամբ ծանուցում է տրամադրում քրեական հետապնդում իրականացնող մարմնին, կասեցման ժամկետը համարվում է երկարացված ծանուցման տրամադրման պահից 15 օրով, որի մասին լիազոր մարմինը տեղեկացնում է ֆինանսական հաստատությանը: Կասեցման ժամկետը երկարացնելու հիմնավոր անհրաժեշտության դեպքում քրեական հետապնդում

իրականացնող մարմինը 15 օրվա ընթացքում տեղեկացնում է լիազոր մարմնին: Կասեցման ժամկետը երկարացնելու անհրաժեշտության մասին լիազոր մարմնին չտեղեկացնելու դեպքում կասեցումը վերանում է»,
3) լրացնել նոր՝ 3.1. մասով՝ հետևյալ բովանդակությամբ՝
«Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կասեցման ժամկետը լիազոր մարմնի հիմնավոր կարծիքով երկարացնելու անհրաժեշտության դեպքում լիազոր մարմինը որոշում է կայացնում կասեցման ժամկետը մինչև 30 օրով երկարացնելու մասին: Սույն մասում նշված ժամկետում լիազոր մարմնի որոշումը ֆինանսական հաստատությանը չտրամադրելու դեպքում կասեցման մասին որոշումը համարվում է ուժը կորցրած:»,
4) 4-րդ մասում «պարզվի, որ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածը հիմնավոր չէ» բառերը փոխարինել «բացակայում է գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման հետագա անհրաժեշտությունը» բառերով:

Հոդված 16. Օրենքի 27-րդ հոդվածում՝
1) վերնագրում «Գործարքի» բառից հետո լրացնել «կատարման» բառով, իսկ «իրականացման» բառը փոխարինել «հաստատման» բառով:
2) 1-ին մասում «համաձայն գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման» բառերը փոխարինել «համաձայն գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման» բառերով, «գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը» բառերը փոխարինել «գործարքի կատարումը կամ գործարար հարաբերության հաստատումը» բառերով «այն» բառը փոխարինել «դրա՝» բառով:
3) 2-րդ մասում «1-7-րդ մասերով» բառերը փոխարինել «4-րդ մասով» բառերով, «պարտականությունները» բառից հետո լրացնել «, ինչպես նաև այն դեպքում, երբ հնարավոր չէ իրականացնել սույն օրենքի 17-րդ հոդվածով սահմանված պարտականությունները» բառերը, «համաձայն» բառից հետո հանել «գործարքի կամ» բառերը, «դադարեցնի» բառից հետո հանել «գործարքը կամ» բառերը, «այն» բառը փոխարինել «դրա՝» բառով:
4) 3-րդ մասում հանել «անդրսահմանային» բառերը:

Հոդված 17. Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասում «սառեցման» բառից հետո լրացնել «, այդ թվում՝» բառերով:

Հոդված 18.
Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-897-12.03.2021,27.04.2021-ՖՎ-011

ՏԵՂԵԿԱՆՔ
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի մայիսի 26-ի ՀՕ-80-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-րդ և 9.1-րդ կետերով.

«2.1) **նախորդող հանցագործությունը** հանցագործություն է, որի կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի ստացվել կամ առաջացել է գույքը.

«9.1) **դրամական փոխանցումը** գործարք է, որը ֆինանսական հաստատության միջոցով կատարվում է փոխանցումը կատարողի անունից՝ նպատակ ունենալով այդ կամ այլ ֆինանսական հաստատությունում որոշակի գումար հասանելի դարձնել փոխանցումը ստացողի համար՝ անկախ փոխանցումը կատարողի և փոխանցումը ստացողի նույն անձը լինելու հանգամանքից.»:

2) 1-ին մասի 3.1-րդ կետում «տրամադրումն է» բառերը փոխարինել «տրամադրումը կամ հավաքումն է» բառերով:

3) 1-ին մասի 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14) **իրական շահառուն** ֆիզիկական անձ է, որի անունից կամ օգտին հաճախորդն իրականում գործում է, և (կամ) որն իրականում (փաստացի) վերահսկում է հաճախորդին կամ այն անձին, որի անունից կամ օգտին գործարքը կատարվում է կամ գործարար հարաբերությունը հաստատվում է: Իրավաբանական անձի (բացառությամբ տրաստի կամ օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այլ իրավաբանական կազմավորման) իրական շահառու է համարվում այն ֆիզիկական անձը, որը՝

ա. ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) քսան և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի քսան և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում,

բ. տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով~~՝ այն դեպքում, եթե առկա է հիմնավոր ենթադրություն, որ սույն կետի «ա» ենթակետի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձը չի հանդիսանում իրական շահառու կամ եթե առկա չէ սույն կետի «ա» ենթակետի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ~~,

գ. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումը իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, եթե առկա չէ սույն կետի «ա» և «բ» ենթակետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ:».

4) 1-ին մասի 16-րդ կետը «ինչպես նաև» բառերից հետո լրացնել «տրաստը կամ» բառով:

5) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 16.1-րդ կետով.

«16.1) **տրաստը** օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այլ իրավաբանական կազմավորում է, որում տրաստի կառավարիչը ֆիդուցիար պարտավորությունների հիման վրա կատարում է տրաստի հիմնադրի կողմից սեփականության իրավունքով իրեն փոխանցված գույքի հետ կապված գործարքներ՝ ի շահ տրաստի շահառուի:»:

~~-~~6) 1-ին մասի 21-րդ կետում հանել «, նրա ընտանիքի անդամ կամ նրա հետ այլ կերպ փոխկապակցված անձ (հայր, մայր, ամուսին, տատ, պապ, քույր, եղբայր, երեխաներ, ամուսնու ծնողներ)» բառերը, «շահառուները,» բառից հետո լրացնել «կյանքի ապահովագրության վկայագրերի շահառուները,» բառերով:

7) 1-ին մասի 22-րդ կետի «բ» ենթակետում «հաճախորդի» բառից հետո լրացնել «,ինչպես նաև բաղաբական ազդեցություն ունեցող անձ հանդիսացող իրական շահառուի» բառերով,

8~~7~~) 1-ին մասի 25-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«25) **քաղաքական ազդեցություն ունեցող անձը** պետական, քաղաքական կամ հանրային բնույթի, ինչպես նաև միջազգային կազմակերպությունում նշանակալից գործառույթներ իրականացրած կամ իրականացնող անձն է (այդ թվում՝ նրա ընտանիքի անդամը կամ նրա հետ սերտորեն փոխկապակցված անձը): Ընդ որում, քաղաքական ազդեցություն ունեցող անձանց շրջանակը չի ընդգրկում միջին և ցածր դասի գործառույթներ իրականացնող անձանց: Քաղաքական ազդեցություն ունեցող անձինք են մասնավորապես՝

ա. պետության ղեկավարները, կառավարության ղեկավարները, նախարարները և նախարարի տեղակալները,

բ. խորհրդարանի անդամները,

գ. բարձրագույն ատյանի դատարանի, սահմանադրական դատարանի կամ այլ բարձր դատական ատյանների դատավորները, անդամները, որոնց որոշումները բողոքարկման ենթակա չեն, բացառությամբ առանձնահատուկ հանգամանքներով պայմանավորված բողոքարկման դեպքերի,

դ. կենտրոնական բանկի նախագահը, նրա տեղակալները և խորհրդի անդամները,

ե. դեսպանները, գործերի հավատարմատարները և զինված ուժերի բարձրաստիճան սպաները,

զ. քաղաքական կուսակցության պաշտոնատար անձինք,

է. պետական սեփականություն հանդիսացող կազմակերպության վարչական, կառավարման կամ վերահսկողական մարմինների անդամները,

ը. տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարները,

թ. միջազգային կազմակերպության ղեկավարները, ղեկավարի տեղակալները, խորհրդի անդամները կամ կառավարչական կամ վերահսկողական այլ համանման գործառույթներ իրականացնող մարմինների անդամները.»:

9~~8~~) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 25.1-րդ և 25.2-րդ կետերով.

«25.1) **միջազգային կազմակերպությունը** անդամ երկրների միջև միջազգային պայմանագրի կարգավիճակ ունեցող պաշտոնական քաղաքական համաձայնության հիման վրա ստեղծված կազմակերպություն է, որն իր գտնվելու վայրի երկրում ռեզիդենտ կառուցվածքային միավոր չի համարվում:

25.2) **ընտանիքի անդամը** «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված անձն է:

Հոդված 2. Օրենքի 2-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԶԵՆՔԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ»

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերում «ֆինանսավորման» բառից հետո լրացնել «, ինչպես նաև զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման» բառերով:

Հոդված 4. Օրենքի 6-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը «գումարը» բառերից հետո լրացնել «հավասար է կամ» բառերով:

2) 4-րդ մասի 3-րդ կետում բ. ենթակետի «տնօրեն (գործադիր մարմին)» բառերը փոխարինել «գործունեության ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ (մարմնի անդամ)» բառերով:

3) 4-րդ մասի 5-րդ կետում «դրամը» բառը փոխարինել «դրամին հավասար կամ դրան» բառերով:

4) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«5. Հաշվետվություն տրամադրող անձին, նրա աշխատակիցներին ~~և ներկայացուցիչներին~~(ղեկավարներին) արգելվում է այն անձին, որի վերաբերյալ հաշվետվություն կամ այլ տեղեկություններ են տրամադրվում լիազոր մարմնին, ինչպես նաև այլ անձանց, բացառությամբ ֆինանսական խմբի դեպքում՝ ֆինանսական խմբի անդամին, հայտնել հաշվետվության կամ այլ տեղեկությունների տրամադրման կամ չտրամադրման, այդ թվում՝ սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն հանձնարարականների ստացման կամ չստացման փաստի մասին:»:

Հոդված 5. Օրենքի 10-րդ հոդվածում՝
1) 1-ին մասի 6-րդ կետում «գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը» բառերը փոխարինել «գործարքի կատարումը կամ գործարար հարաբերության հաստատումը-» բառերով:
2) 1-ին մասի 18-րդ կետի «տվյալների հիման վրա» բառերից հետո լրացնել «կամ սեփական նախաձեռնությամբ» բառերով:
3) 4-րդ մասում «10-րդ և 11-րդ կետերով սահմանված իրավասությունները» բառերը փոխարինել «10-րդ կետով սահմանված իրավասությունը, ինչպես նաև 11-րդ կետով սահմանված՝ ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց գույքը սառեցնելու իրավասությունը՝» բառերով:

Հոդված 6. Օրենքի 11-րդ հոդվածում.
ա) 1-ին մասի 13-րդ կետում «՝ ոչ ֆինանսական հաստատության կամ անձի» բառերը փոխարինել «գործառույթները հաշվետվություն տրամադրող անձի» բառերով.
բ) 1-ին մասի 18-րդ կետում- «այլ դրույթներ» բառերը փոխարինել «պարտականությունների կատարմանը ներկայացվող նվազագույն պահանջները» բառերով:

Հոդված 7. Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասում «և կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ սահմանված կարգով» բառերը փոխարինել «, որոնք կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ սահմանված կարգով և չեն կարող տրամադրվել երրորդ անձի՝ բացառությամբ քրեական հետապնդման մարմինների» բառերով:

Հոդված 8. Օրենքի 13-րդ հոդվածում՝
1) 3-րդ մասի 1-ին պարբերությունը «կասկածներ» բառից հետո լրացնել «, կամ նախորդող հանցագործության այնպիսի հիմնավոր կասկածներ, որոնք կարող են հանգեցնել փողերի լվացման:» բառերով:
2) 4-րդ մասի 1-ին պարբերությունը «վերաբերյալ» բառից հետո լրացնել «, կամ նախորդող հանցագործության կասկածի կամ դեպքի վերաբերյալ, որը լիազոր մարմնի կարծիքով կարող է հանգեցնել փողերի լվացման:» բառերով:

Հոդված 9. Օրենքի 16-րդ հոդվածում՝
1) 1-ին մասի 2-րդ պարբերությունում հանել «կամ միանգամյա գործարք կատարելու» բառերը**:**
2**)** 3-րդ մասում «դրամը» բառը փոխարինել «դրամին հավասար կամ դրան» բառերով , իսկ «(բացառությամբ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածների առկայության, որի դեպքում հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունն իրականացվում է անկախ գումարային սահմանաչափից),» բառերից հետո լրացնել «ինչպես նաև սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված դեպքերում,» բառերով:
3) 4-րդ մասի 2-րդ կետում.

ա) «վայրը,» բառից հետո լրացնել «գործունեության իրականացման վայրը (եթե տարբերվում է իրավաբանական անձի գտնվելու վայրից), կանոնադրությունը կամ համանման այլ փաստաթուղթը,» բառերով,
բ) «գործադիր մարմնի ղեկավարի» բառերը փոխարինել «գործունեության ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձի (մարմնի անդամի)» բառերով:
4) 5-րդ մասի 1-ին կետում հանել «պարզի լիազորված անձի առկայությունը և առկայության դեպքում» բառերը, իսկ «լիազորված անձին» բառերից հետո լրացնել «(առկայության դեպքում)» բառերը:
5) 5-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«2) նույնականացնի իրական շահառուին և ողջամիտ քայլեր ձեռնարկի նրա ինքնությունը ստուգելու նպատակով՝ արժանահավատ աղբյուրներից ստացված տեղեկությունների հիման վրա, ընդ որում Հայաստանի Հանրապետության և (կամ) օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպության կամ հիմնարկի դեպքում՝ սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի «ա»-«գ» ենթակետերով սահմանված կարգով:»:
6) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-րդ մասը.
5.1 Սույն հոդվածի 5-րդ մասի 2-րդ ենթակետի համաձայն հաճախորդի իրական շահառուին նույնականացնելու և ինքնությունը ստուգելու նպատակով հաշվետվություն տրամադրող անձի կողմից ձեռնարկված քայլերը, եզրահանգումները և դրանց հիմնավորումները փաստաթղթավորվում ու պահպանվում են սույն օրենքով սահմանված կարգով և ժամկետում:»:
7) 6-րդ մասում հանել «հաճախորդի իրական շահառուին պարզելու նպատակով» և «(բացառությամբ արժեթղթերի շուկայի կարգավորման օրենսդրությամբ նախատեսված հաշվետու թողարկողների)» բառերը:
8) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-րդ մասը.
«6.1 Տրաստ կամ օտարերկյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այլ իրավաբանական կազմավորում հանդիսացող հաճախորդների դեպքում հաշվետվություն տրամադրող անձը հաճախորդի իրական շահառուին նույնականացնելու և ողջամիտ քայլերի ձեռնարկմամբ նրա ինքնությունը ստուգելու նպատակով պետք է լիարժեք տեղեկություններ ունենա դրա հիմնադիրների, կառավարիչների, շահառուների (այդ թվում՝ շահառուների դասի), շահերի պաշտպանի (առկայության դեպքում) և իրական (փաստացի) հսկողություն իրականացնող այլ ֆիզիկական անձի կամ համանման գործառույթներ իրականացնող անձի և նրանց լիազորությունների վերաբերյալ:»:
9) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«Հաշվետվություն տրամադրող անձը պետք է հասկանա հաճախորդի գործարար բնութագիրը, գործարքի կամ գործարար հարաբերության նպատակը և նախատեսվող բնույթը, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, ձեռք բերի տեղեկություններ գործարքի կամ գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի մասին:»:
~~9~~10) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-րդ մաս.
«7.1 Տրաստի կառավարիչ հանդիսացող հաճախորդը (այդ թվում՝ ոչ ֆինանսական հաստատությունը) սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կամ 2-րդ կետով սահմանված դեպքերում հաշվետվություն տրամադրող անձի հետ գործարք կատարելիս կամ գործարար հարաբերություն հաստատելիս պարտավոր է բացահայտել իր կարգավիճակը:»:

Հոդված 10. Օրենքի 18-րդ ~~հոդվածի~~ հոդվածում.
1) 4-րդ մասում «օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող անձ» բառերը փոխարինել «տրաստ կամ օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այլ իրավաբանական կազմավորում» բառերով,
2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-րդ մաս.

«4.1. Հաշվետվություն տրամադրող անձը պարտավոր է նույնականացնել կյանքի ապահովագրության կամ ներդրումային բնույթի այլ ապահովագրական վկայագրի պայմանագրի շահառուին վերջինիս ինքնությունը կամ բնորոշ հատկանիշները պարզելուց անմիջապես հետո, իսկ ինքնության ստուգումն իրականացնել ապահովագրական հատուցումը վճարելու պահին: Ընդ որում.
ա) ֆիզիկական կամ իրավաբանական անձ շահառուների համար՝ առնվազն ծեռք բերելով տվյալ անձի անունը, ազգանունը կամ անվանումը,
բ) որոշակի հատկանիշների կամ որոշակի խմբին դասվելու կամ որևէ այլ հիմքով շահառուների համար՝ առնվազն ծեռք բերելով ապահովագրական հատուցումը վճարելու պահին շահառուներին նույնականացնելու համար բավարար տեղեկություններ:»

Հոդված 11. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասում
1) 4-րդ կետում «փաստաթղթավորի» բառից առաջ լրացնել «հասկանա, ինչպես նաև» բառերով.
2) 5-րդ կետում «տարանցիկ հաշիվների դեպքում» բառերը հանել, իսկ «ա» ենթակետում «իրականացրել է» բառից առաջ լրացնել «տարանցիկ հաշիվների դեպքում» բառերով:

Հոդված 12~~1~~. Օրենքի 20-րդ հոդվածում
1) 1-ին մասի 3-րդ կետում «տվյալները» բառից հետո լրացնել «, կամ փոխանցումը կատարողի հասցեն, կամ ծննդյան ամսաթիվը և վայրը՝», իսկ «(պետական գրանցման, հաշվառման համարը և այլն)» բառերից հետո՝ «կամ գտնվելու վայրի հասցեն՝» բառերով:
2) 2-րդ մասից հանել «Բոլոր» բառը:

Հոդված 13. Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը «պետք է» բառից հետո լրացնել «ծեռնարկի համարժեք միջոցառումներ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերը գսպելու ուղղությամբ, ինչպես նաև» բառերով:

Հոդված 14~~2~~. Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին ~~մասի~~ մասում.
1) 11-րդ կետը «հաճախորդը» բառից հետո լրացնել «կամ իրական շահառուն» բառերով,
2) 15-րդ կետը «տեղեկատվության» բառից հետո լրացնել «, այդ թվում՝ կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ տեղեկությունների» բառերով:

Հոդված 15. Օրենքի 26-րդ հոդվածում՝
1) 2-րդ մասում «5 օրով կասեցնելու» բառերը փոխարինել «15 օրով կասեցնել» բառերով,
2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
«Այն դեպքում, երբ լիազոր մարմինը սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով կասեցված գործարքի կամ գործարար հարաբերության առնչությամբ ծանուցում է տրամադրում քրեական հետապնդում իրականացնող մարմնին, կասեցման ժամկետը համարվում է երկարացված ծանուցման տրամադրման պահից 15 օրով, որի մասին լիազոր մարմինը տեղեկացնում է ֆինանսական հաստատությանը: Կասեցման ժամկետը երկարացնելու հիմնավոր անհրաժեշտության դեպքում քրեական հետապնդում իրականացնող մարմինը 15 օրվա ընթացքում տեղեկացնում է լիազոր մարմնին: Կասեցման ժամկետը երկարացնելու անհրաժեշտության մասին լիազոր մարմնին չտեղեկացնելու դեպքում կասեցումը վերանում է»,
3) լրացնել նոր՝ 3.1. մասով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կասեցման ժամկետը լիազոր մարմնի հիմնավոր կարծիքով երկարացնելու անհրաժեշտության դեպքում լիազոր մարմինը որոշում է կայացնում կասեցման ժամկետը մինչև 30 օրով երկարացնելու մասին: Սույն մասում նշված ժամկետում լիազոր մարմնի որոշումը ֆինանսական հաստատությանը չտրամադրելու դեպքում կասեցման մասին որոշումը համարվում է ուժը կորցրած:»,
4) 4-րդ մասում «պարզվի, որ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածը հիմնավոր չէ» բառերը փոխարինել «բացակայում է գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման հետագա անհրաժեշտությունը» բառերով:

Հոդված 163. Օրենքի 27-րդ հոդվածում՝
1) վերնագրում «Գործարքի» բառից հետո լրացնել «կատարման» բառով, իսկ «իրականացման» բառը փոխարինել «հաստատման» բառով:
2) 1-ին մասում «համաձայն գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման» բառերը փոխարինել «համաձայն գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման» բառերով, «գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը» բառերը փոխարինել «գործարքի կատարումը կամ գործարար հարաբերության հաստատումը» բառերով «այն» բառը փոխարինել «դրա՝» բառով:
3) 2-րդ մասում «1-7-րդ մասերով» բառերը փոխարինել «4-րդ մասով» բառերով, «պարտականությունները» բառից հետո լրացնել «, ինչպես նաև այն դեպքում, երբ հնարավոր չէ իրականացնել սույն օրենքի 17-րդ հոդվածով սահմանված պարտականությունները» բառերը, «համաձայն» բառից հետո հանել «գործարքի կամ» բառերը, «դադարեցնի» բառից հետո հանել «գործարքը կամ» բառերը, «այն» բառը փոխարինել «դրա՝» բառով:
4) 3-րդ մասում հանել «անդրսահմանային» բառերը:

Հոդված 174. Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասում «սառեցման» բառից հետո լրացնել «, այդ թվում՝» բառերով:

Հոդված 185.
Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ և ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-897) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, հոդված 1	3-րդ մասի «բ» կետում «իրավաբանական անձի» բառերից առաջ լրացնել «տվյալ» բառը և «բ» կետից հանել «այն դեպքում, եթե առկա է հիմնավոր ենթադրություն, որ սույն կետի «ա» ենթակետի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձը չի հանդիսանում իրական շահառու կամ եթե առկա չէ սույն կետի «ա» ենթակետի պահանջներին համապատասխանող ֆիզիկական	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			անձ» բառերը: Փոփոխությունը պայմանավորված է իրական շահառուի հասկացության սահմանման միջազգային փորձի ուսումնասիրությամբ, ինչը ցույց է տալիս, որ մի շարք երկրներում, մասնավորապես՝ Դանիայում, Բելգիայում, Ավստրիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում և Շվեյցարիայում «այլ միջոցներով վերահսկողություն» իրականացնելը նախատեսվում է որպես առանձին հիմք, որը պայմանավորված չէ առաջին հիմքի առկայությամբ կամ բացակայությամբ: Սույն առաջարկը ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից:		
2.	ՀՀ կառավարություն	««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, հոդված 1	6-րդ մասում «բառերը» բառից հետո լրացնել «, «շահառուները,» բառից հետո լրացնել «կյանքի ապահովագրության վկայագրերի շահառուները,» բառերով» բառերը: Փոփոխությունը կատարվել է ՖԱԹՖ հանձնարարական 10-ի չափորոշիչ 10.13-ի պահանջների ամբողջական իմպլեմենտացումն ապահովելու նպատակով:		Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	««Փողերի լվացման և	Համարակալումը փոխել և լրացնել		Ընդունվել է:

		ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, հոդված 1	նոր 7-րդ մաս հետևյալ բովանդակությամբ. «7) 1-ին մասի 22-րդ կետի «բ» ենթակետում «հաճախորդի» բառից հետո լրացնել «,ինչպես նաև քաղաքական ազդեցություն ունեցող անձ հանդիսացող իրական շահառուի» բառերով,» Փոփոխությունը կատարվել է ՖԱԹՖ հանձնարարական 12-ի չափորոշիչ 12.1-ի պահանջների ամբողջական իմպլեմենտացումն ապահովելու նպատակով: Պետք է նշել, որ չնայած այն հանգամանքին, որ ՀՀ-ում գործող ապահովագրական ընկերությունները նման տիպի ծառայություններ չեն մատուցում, այնուամենային նման դասի ապահովագրության լիցենզիայի առկայության պարագայում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի գնահատումների շրջանակներում կարևորվում է Հանձնարարական 10-ի ամբողջական իմպլեմենտացումը: Ուստի, համապատասխան փոփոխության կատարումը կնպաստի ՀՀ-ի՝ ՖԱԹՖ հանձնարարականներին տեխնիկական համապատասխանության		

			ապահովման մակարդակի բարձրացմանը:		
4.	ՀՀ կառավարություն	««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, հոդված 1	8-րդ մասում համարակալումը փոփոխել և լրացնել նոր «ը» կետ հետևյալ բովանդակությամբ. «ը. տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարները» բառերը: Փոփոխությունը կատարվել է՝ հիմք ընդունելով ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների դիտարկումները:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
5.	ՀՀ կառավարություն	««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, հոդված 4	4-րդ մասում «և ներկայացուցիչներին» բառերը փոխարինել «(ղեկավարներին)» բառերով: Փոփոխությունը կատարվել է ՖԱԹՖ հանձնարարական 21-ի չափորոշիչ 21.1-ի պահանջների ամբողջական իմպլեմենտացումն ապահովելու նպատակով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
6.	ՀՀ կառավարություն	««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»	Հոդված 6-ը համարակալել և լրացնել նոր կետ հետևյալ բովանդակությամբ. «բ) 1-ին մասի 18-րդ կետում «այլ դրույթներ» բառերը փոխարինել «պարտականությունների կատարմանը ներկայացվող նվազագույն պահանջները»	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

		ՀՀ օրենքի նախագիծ, հոդված 6	բառերով:» ՖԱԹՖ հանձնարարականները տարանջատվում են 3 հիմնական խմբերի՝ օրենքի, նորմատիվ իրավական ակտի և ուղեցույցերի մակարդակով իմպլեմենտացում պահանջող հանձնարարականների: Հոդված 11-ով սահմանվում են այն դեպքերը, երբ ՖԱԹՖ հանձնարարականների իմպլեմենտացումը հնարավոր է իրականացնել նորմատիվ իրավական ակտի մակարդակով: Այդուհանդերձ, Հոդված 11-ով թվարկված դեպքերը ՖԱԹՖ հանձնարարականների տեսանկյունից ամբողջական չեն: Ուստի, կատարվող փոփոխությունը նպատակ ունի ապահովել, որ բոլոր այն դեպքերում, երբ ՖԱԹՖ հանձնարարականների իմպլեմենտացումն հնարավոր է իրականացնել նորմատիվ իրավական ակտով, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը նման իրավասություն ընձեռի ՀՀ կենտրոնական բանկի խորհրդին:		

7.	ՀՀ կառավարություն	««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, հոդված 9	3-րդ մասը համարակալել և լրացնել նոր կետ հետևյալ բովանդակությամբ. «ա) «վայրը,» բառից հետո լրացնել «գործունեության իրականացման վայրը (եթե տարբերվում է իրավաբանական անձի գտնվելու վայրից), կանոնադրությունը կամ համանման այլ փաստաթուղթը,» բառերով,» Կատարված փոփոխությունները նպատակ ունեն ապահովել ՖԱԹՖ հանձնարարական 10-ի չափորոշիչ 10.9-ի ամբողջական իմպլեմենտացումը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
8.	ՀՀ կառավարություն	««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, հոդված 9	7-րդ մասում «հանել» բառից հետո լրացնել ««հաճախորդի իրական շահառուին պարզելու նպատակով» և» բառերը: Կատարված փոփոխությունները նպատակ ունեն ապահովել ՖԱԹՖ հանձնարարական 10-ի չափորոշիչ 10.9-ի ամբողջական իմպլեմենտացումը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
9.	ՀՀ կառավարություն	««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում	8-րդ մասում «նույնականացնելու և» բառերից հետո լրացնել «ողջամիտ քայլերի ձեռնարկմամբ» բառերը: Փոփոխությունը կատարվել է ՖԱԹՖ		Ընդունվել է:

		փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, հոդված 9	հանձնարարական 10-ի չափորոշիչ 10.11-ի պահանջների ամբողջական իմպլեմենտացումն ապահովելու նպատակով:		
10.	ՀՀ կառավարություն	««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, հոդված 9	Համարակալումը փոփոխել և լրացնել նոր 9-րդ մաս հետևյալ բովանդակությամբ. «9) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հաշվետվություն տրամադրող անձը պետք է հասկանա հաճախորդի գործարար բնութագիրը, գործարքի կամ գործարար հարաբերության նպատակը և նախատեսվող բնույթը, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, ձեռք բերի տեղեկություններ գործարքի կամ գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի մասին:»: Կատարված փոփոխությունները նպատակ ունեն ապահովել ՖԱԹՖ հանձնարարական 10-ի չափորոշիչ 10.6-ի պահանջների ամբողջական իմպլեմենտացումը: Հատկանշական է, որ մի շարք երկրներում, մասնավորապես Սլովակիա, Լիտվա, գործարքի կամ գործարար հարաբերության բնույթը չհասկանալու պահանջի	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			ոչ հստակ ամրագրումը քննադատվել է՝ հանգեցնելով ՖԱԹՖ հանձնարարական 10-ի գնահատականի իջեցման:		
11.	ՀՀ կառավարություն	««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, հոդված 10	Հոդվածը համարակալել և լրացնել նոր 2-րդ մաս հետևյալ բովանդակությամբ. «2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-րդ մաս. «4.1. Հաշվետվություն տրամադրող անձը պարտավոր է նույնականացնել կյանքի ապահովագրության կամ ներդրումային բնույթի այլ ապահովագրական վկայագրի պայմանագրի շահառուին վերջինիս ինքնությունը կամ բնորոշ հատկանիշները պարզելուց անմիջապես հետո, իսկ ինքնության ստուգումն իրականացնել ապահովագրական հատուցումը վճարելու պահին: Ընդ որում. ա) ֆիզիկական կամ իրավաբանական անձ շահառուների համար՝ առնվազն ձեռք բերելով տվյալ անձի անունը, ազգանունը կամ անվանումը, բ) որոշակի հատկանիշների կամ որոշակի խմբին դասվելու կամ որևէ այլ հիմքով շահառուների համար՝ առնվազն ձեռք բերելով ապահովագրական հատուցումը վճարելու պահին շահառուներին նույնականացնելու համար բավարար տեղեկություններ:»	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			Կատարված փոփոխությունները նպատակ ունեն ապահովել ՖԱԹՖ հանձնարարական 10-ի չափորոշիչ 10.12-ի ամբողջական իմպլեմենտացումը:		
	ՀՀ կառավարություն	««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ	Նախագծի համարակալումը փոփոխել և լրացնել նոր հոդված հետևյալ բովանդակությամբ. **«Հոդված 11.** Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասում 1) 4-րդ կետում «փաստաթղթավորի» բառից առաջ լրացնել «հասկանա, ինչպես նաև» բառերով.2) 5-րդ կետում «տարանցիկ հաշիվների դեպքում» բառերը հանել, իսկ «ա» ենթակետում «իրականացրել է» բառից առաջ լրացնել «տարանցիկ հաշիվների դեպքում» բառերով:» Կատարված փոփոխությունները նպատակ ունեն ապահովել ՖԱԹՖ հանձնարարական 13-ի չափորոշիչ 13.1-ի և 13.3-ի ամբողջական իմպլեմենտացումը:		Ընդունվել է:
12.	ՀՀ կառավարություն	««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և	Նախագծի համարակալումը փոփոխել և լրացնել նոր հոդված հետևյալ բովանդակությամբ. **«Հոդված 13.** Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը «պետք է»	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

		լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ	բառից հետո լրացնել «ձեռնարկի համարժեք միջոցառումներ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերը զսպելու ուղղությամբ, ինչպես նաև» բառերով:» Կատարված փոփոխությունները նպատակ ունեն ապահովել ՖԱԹՖ հանձնարարական 18-ի չափորոշիչ 18.3-ի պահանջների ամբողջական իմպլեմենտացումը:		
13.	ՀՀ կառավարություն	««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, հոդված 12	Նախորդ կետերի համաձայն փոփոխված համարակալմամբ 14-րդ հոդվածը համարակալել և լրացնել նոր 1-ին մաս հետևյալ բովանդակությամբ. «1) 11-րդ կետը «հաճախորդը» բառից հետո լրացնել «կամ իրական շահառուն» բառերով,» Փոփոխությունը կատարվել է ՖԱԹՖ հանձնարարական 12-ի չափորոշիչ 12.1-ի «ա» կետի պահանջների ամբողջական իմպլեմենտացումն ապահովելու նպատակով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
14.	ՀՀ ԱԺ պատգամավոր Արկադի Խաչատրյան	««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ	Նախագծի 15-րդ հոդվածում՝ 1. սահմանել, որ կասեցման երկարացման անհրաժեշտությունը իրավապահ մարմնի կողմից լինի	Ընդունվել է մասնակի: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն՝ երկարացման հիմնավորվածությունը	Ընդունվել է:

		կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 15-րդ հոդված	հիմնավորված, այլ ոչ թե մեխանիկական ընթացակարգ, և լիազոր մարմինը ևս կայացնի կասեցումը երկարացնելու վերաբերյալ հիմնավորված որոշում, 2. դիտարկել ծանուցմամբ քրեական հետապնդման մարմինների տեղեկանալուց հետո լիազոր մարմնի կողմից այլևս կասեցում չկիրառելու հարցը, քանի որ վարույթն իրականացնող մարմինը ունի բավականաչափ գործիքակազմ գույքի հետագա արտահոսքը կանխարգելելու համար:	ապահովելու նպատակով: Նախագծի 15-րդ հոդվածի 2-րդ մասում «Կասեցման ժամկետը երկարացնելու անհրաժեշտության դեպքում» բառերը փոխարինել «Կասեցման ժամկետը երկարացնելու հիմնավոր անհրաժեշտության դեպքում» բառերով, 3-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կասեցման ժամկետը լիազոր մարմնի հիմնավոր կարծիքով երկարացնելու անհրաժեշտության դեպքում լիազոր մարմինը որոշում է կայացնում կասեցման ժամկետը մինչև 30 օրով երկարացնելու մասին:»:	

				Ինչ վերաբերում է կասեցումը լիազոր մարմնի կողմից կիրառելուն այն դեպքում, երբ արդեն իսկ ծանուցում է տրամադրվել քրեական հետապնդում իրականացնող մարմիններին, ապա առաջարկվող կարգավորումն բխում է ներկայիս պրակտիկայից և միտված է բարելավելու կասեցումների կիրառման արդյունավետությունը, քանի որ ներկայում վարույթն իրականացնող մարմինը փաստացի չի կարողանում նման կարճ ժամանակահատվածում կիրառել գույքի արտահոսքը կանխարգելող միջոցառումներ:	